Հաստատված է գիտխորհրդի
«20» 03 2013թ., հ.7 նիստի որոշմամբ
Գիտխորհրդի նախագահ, ռեկտոր
_____Գ. Գասպարյան

Կանոնակարգ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պատվավոր կոչումներ շնորհելու

Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) պատվավոր կոչումներ շնորհելու կարգը:

1. **Ընդհանուր դրույթներ**

Պատվավոր կոչումներ շնորհելու համար թեկնածուների տարակարգ.

1.1. Դասախոսներ, որոնք ունեն պրոֆեսորի գիտական կոչում և գիտությունների դոկտորի գիտական աստիճան,

1.2. Դասախոսներ, որոնք ունեն պրոֆեսորի գիտական կոչում և գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,

1.3. Համալսարանի շրջանավարտներ,

1.4. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ:

<u>1.1. և 1.2. տարակարգերին</u> համապատասխանում են այն դասախոսները, որոնք ունեն 25 տարվա գիտամանկավարժական ստաժ, որից 15-ը աշխատել են համալսարանում հետևյալ պաշտոններում՝ ռեկտորի, պրոռեկտորի, ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի, որոնք զգալի ավանդ և ներդրում են ունեցել Համալսարանի զարգացման գործում, ստացել են պետական պարգևներ կամ ունեն միջազգային ճանաչում գիտության, բարձրագույն կրթության, գիտական կադրերի դաստիարակության և պատրաստման գործում:

1.3. տարակարգին կարող են հավակնել այն շրջանավարտները, որոնք նպաստել են Հայաստանի Հանրապետության զարգացմանն իրենց գիտական, կրթական, հասարակական-քաղաքական գործունեությամբ:

1.4. տարակարգին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք էական ներդրում են ունեցել հանրապետության զարգացման գործում, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք զգալի ավանդ են ունեցել Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև քաղաքական, կրթական, գիտական և հասարակական հարաբերությունների զարգացման և ընդլայնման գործընթացներում:

2. Թեկնածուների առաջադրման կարգը

2.1. Համալսարանի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումները շնորհվում են համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

2.2. Պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումների համար թեկնածուներ կարող են առաջադրել համալսարանի ռեկտորը, համալսարանի գիտական խորհուրդը և ֆակուլտետների խորհուրդները: Գիտական խորհուրդը և ֆակուլտետների խորհուրդները պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումների համար թեկնածուների առաջադրման մասին որոշումն ընդունում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

2.3. Թեկնածության առաջադրման որոշումը փոխանցվում է Համալսարանի գիտական քարտուղարին հարցը համալսարանի գիտական խորհրդին ներկայացնելու համար: Որոշմանը կցվում է թեկնածուի արժանիքների շարադրումը և լուսանկարը:

2.4. Պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումները շնորհվում են և վկայագրերը հանդիսավոր կերպով հանձնվում են համալսարանի գիտական խորհրդի նիստին: Առանձին դեպքերում վկայագրի հանդիսավոր հանձնումը

կարող է տեղի ունենալ այլ երկրում՝ համալսարանի պատվիրակված ներկայացուցչի կողմից:

3. Իրավունքներ

3.1. Համալսարանի պատվավոր պրոֆեսորը և պատվավոր դոկտորն օգտվում են համալսարանի դոկտորի և պրոֆեսորի իրավունքներից՝ ստանալով աջակցություն դասախոսություններ կազմակերպելու, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու հարցում, ինչպես նաև մասնակցելու գիտաժողովներին, սեմինարներին և գիտական ընթերցումներին: Համալսարանի պատվավոր պրոֆեսորին և պատվավոր դոկտորին հնարավորություն է տրվում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համալսարանի գիտական խորհուրդների նիստերին:

3.2. Համալսարանի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի անունները բոլոր տիտղոսներով, երկրի անվանմամբ, շնորհման ամսաթվով գրանցվում են «ԵՊԼՀ-ի պատվավոր պրոֆեսորների և պատվավոր դոկտորների» պատվո գրքում, ինչպես նաև նրանց մասին տեղեկատվություն է զետեղվում համալսարանի կայքում, իսկ այդ անձի լուսանկարը փակցվում է համալսարանի թանգարանում: